

6414

Pliny-ly
129

1806

2003


2011

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԶՈՒՐ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽԻՍՏ ԵԻՐԱՂԱՇԱՐԺ ԶԱԽՆՏ

ՄԷԿ ԱՐԱՐ



«Իր սիրելի բարեկամ Պ. Առե-
«տիս Առաքելեանին երախ-
«տագետ սրտով նշի-
«րում է Հեղինակը»

ՀԵՂԻՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Կ. ԱՌԵՏԻՍԵԱՆԻ

ՕՏԵՍԱ

ԳԻՆ 23 ԳՈՊԻԳ

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Յ. ԱԶԱՂԱՐ

ԴՊՐՈՒ ԴՆՆՈՂԻ ԴՆՆՈՂԻ

1906

831.99
4-79

48

300
Turkey

Կ Ա Տ Ա Կ Ե Ր Դ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այլ

ԶՈՒՐ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԽԻՍՏ ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶԱԽԵՇՏ

ՄԷԿ ԱՐԱՐ



«Իր սիրելի բարեկամ Պ. Աշե-
«տիս Առաքելանին երախ-
«տագեաւ արտով նշի-
«րոշմ է Հեղինակը»

ՀԵՂԻՐԱԿՈՒԹԻՒՆ

Կ. ԱՌԵՏԻՕԵԱՆԻ

Օ Տ Ե Ս Ա



ԳԻՆ 23 ԿՈՊԵԿ

Վ Ա Ռ Ն Ա

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Յ. ԱԶԱՂԱՐ

1 9 0 6

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՍՏԵՓԱՆ ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆ. 60 տարեկան գըլ-
(խին մազերը թափած.
ՄԱՐԹԱ նրա կինը 50 տարեկան.
ՍԻՐԱՆՈՅՇ նրանց աղջիկը 28 տար.
ԱՐՄԵՆԱԿ դերձակի օգնական 28 տար.
ՊԻՂԱՏՈՍ պանդուխտ մը 30 տար.
ՍՈՒՍԱՆ հարսնախօս 60 տարեկան

Գործողութիւնը տեղի է ունենում Գառնակեր-
եանների տանը .

Անցքը տեղի է ունենում X հայաշէտ գիւղու-
մը .



129-2015

(1867 39 9)

18129

Բեմը ներկայացնում է հարուստ, բայց
անճաշակ կահաւորուած մի տենեակ :

ՏԵՍԻՒ Ա .

ՄԱՐԹԱ ԵՒ ՍԻՐԱՆՈՅՇ

Սիր.— (ձեռքի գիրքը թողնելով) Մայրիկ
երբ Սուսան ապրայի ըսած երիտասարդը
զիս հաւանի և ուզէ, այն ատեն ո՞րքան
փող կամ օժիտ ինձ պիտի տաք :

Մար.— (թողնելով ձեռքի կարը) Ի՞նչ ըսել
է որքան գումար :

Սիր.— Այո, ես կուզեմ իմանալ ինձի հա-
մար նշանակուած օժիտը, որպէսզի ատոր
համաձայն փեսայի հետ խօսեմ :

Մար.— Անուշիկս, այդ քու գիտնալիք գոր-
ծը չէ, հօրդ կամքն է որքան, կուզէ այն-
քան կուտայ :

Սիր.— Ըսինք, որ 500 ըուպլի տուեց .

Մար.— Պէտք է առնես և շնորհակալու-
թիւն յայտնես, որովհետեւ հայրդ իրեն կա-
րողութենէն աւելի չկրնար տալ :

Սիր.— Հայրս որ ուզէ կարող է հազարներ
տալ և ոչ թէ հարիւրներ . . :

Մար.— Գարձեալ անոր կամքն է, և հայրդ
ինչպէս ուզէ այնպէս կրնէ :

Սիր.— Ի՞նչ ըսել է հօրս կամքն է, ես ուզ-
ղակի կը պահանջեմ :

Մար.— Քո պահանջը արդարացի չէ հօրդ
դէմ, հայրդ կարող է նեղանալ և քեզի ո-
չինչ ալ չի տալ :

Սիր.— Ի՞նչպէս թէ իմ պահանջը արդարա-
ցի չէ, ես մօտաւորապէս 15 տարի է այս
տանը մէջ կաշխատիմ կը չարչարուիմ և ե-
թէ հայրս հարստութիւն գիւղել է իմ գրը-
տինքս ալ կայ անոր մէջ, և երբ այսօր ես
պիտի լաժանուիմ այս տունէն միթէ՞ ի
բաւունք չունիմ իմ աշխատանքի փոխարէն
հօրմէս մէկ լաժին պահանջելու :

Մար.— Անուշիկս, այդպէս մի խօսիր մեղք

է հոգուդ, հօրդ կամքին եթէ հակառակիս
կը բարկանայ վրադ, քեզ տունէն դուրս կը
վռնտէ, ծնողացդ պէտք է հնազանդ ըլլաս,
թէ ոչ Աստուած ալ վրադ կը բարկանայ :

Սիր. — Մայրիկ Աստուծոյն թողնենք հան-
գիստ, սրովհետեւ Աստուած արդար իրա-
ւունքի ու բողոքի միշտ կը լսէ, մայրիկ,
դու կըսես, որ հայրս ինձ բարկանալով մէկ
փարա մը չի տար ու դուրս կը վռնտէ
զիս, բայց միթէ՞ հայրս ունի բարոյական
իրաւունք, վերջապէս ես ձեզի՞նք կը պա-
հանջեմ իմ արդար իրաւունքս :

Մար. — Աղջիկա, դու երեխայ չես, քիչ մը
խելքի եկուր, մի մոռնար որ մենք չեզ
պահել մեծցուցեր ենք, ձագուկս, դու դեռ
ի՞նչ գիտես, խելճ հայրդ ահագին ծախսեր
է ըրել քեզ համար, և դու այդ բոլորը մի՞-
թէ կուզես մոռնալ :

Սիր. — Ես այդ բոլորը չեմ ուրանար, բայց
այդ ձեր ծնողական սրբազան պարտակա-
նութիւնն էր, որ դուք կատարեցիք, իսկ
այժմ երբ ես պապենական տուն թողնելով
իմ ճակատագրական բազդի ետեւէն կերթամ,
եւ թէ քեզմէ և թէ հօրմէս կը պահանջեմ,
որ իմ աշխատանքի փոխարէն մէկ գումար
տաք, որ ես ալ ամուսնուս հետ ապրելու
միջոց ունենամ (դռնը բաղխում են) :

Մար. — Լռի՛ր, տես դուռը կը բախդեն, կա-
րելի է Սուսան ապլան փեսացուի հետ ե-
կած է (Սիրանոյշ մօտենալով դրան) ո՛չ, ո՛չ
սպասիր դուռը մի բանար, գաղտուկ մը նա-
յիր տես ո՞վ է (Սիրանոյշը նայում է) :

Սիր. — Մայրիկ երիտասարդ մըն է :

Մար. — Հա՛ կարելի է Սուսան ապլան փե-
սացուն խրկեց, ինքը վերջը անպատճառ
կուգայ, լա՛ց լա՛ց, շուտով ներս հրաւիրէ :

Սիր. — (դռնը բաց անելով) համեցէք :

ՏԵՍԻԼ Բ .

ՆՈՅՆԲ ԵՒ ԱՐՄԵՆԱԿ

Արմ. — (գլուխ տալով) Բարեւ ձեզ :

Մար. — Բարով հաշար բարով, (ձեռք մեկ-
նելով) խնդրեմ ծանօթանա՛ք, տիկին մար-
թա Գարնակե՛րեան :

Արմ. — Արմենակ Արմենակեան :

Մար. — (ցոյց տալով Սիրանոյշը) այս ալ
աղջիկս Սիրանոյշն է (Սիրանոյշն եւ Արմենակ-
եան գլուխ կուտան) Սիրանոյշ գնա տես
ի՞նչ եղաւ հայրդ այսքան ժամանակ չեկաւ,
(Սիրանոյշը գնում է) խնդրեմ Պ . Արմենակ
հրաժեցէք նստէք (նստում է) ի՞նչով կարող
եմ ձեզ հիւրասիրել :

Արմ. — Ո՛չ, ո՛չ տիկին խնդրեմ, ներութիւն
մի կրէք շատ շնորհակալ եմ, ժամանակ
չունեմ :

Մար. — Ի՞նչ կըսէք, առանց հիւրասիրելու
ինչպէս ձեզ կը թողնեմ, սպասեցէք հիմայ
ամուսինս Ս եփան աղան կուգայ քիչ մը կը
խօսիք միասին, խնդրեմ մի րոպէ ես իս-
կոյն կուգամ (մեկնում է) :

ՏԵՍԻԼ Գ .

Արմ. — (առանձին) Ճշմարիտը խոստովա-
նինք վարպետս թովմաս աղան, օրական տա-
սը տասն և հինգ տուն ուղարկում է ապա-
ռիկները հաւաքելու, ոչ մի տեղ այսքան
սիրալիկ ընդունելութիւն չեմ տեսած, ի՞նչ
ու մեր հայերը այս մարդու վրայ վատ են
խօսում, բամբասում, ամսոս չէ՞ ալսպիսի
պատուաւոր լաւ ընտանիքի վրայ վատ կար-
ծիքներ յայտնելու թէ վատ է, խարդախ է,
յամառ, շահագործող, և շատ ազահ, չիտա-
կն ասած ո՞ր մարդը ազահ չէ, որ Ստեփան
աղան ազահ չլինի, դօ, մարդու աչքը ին-
չով է կշտանում, բաց ի մէկ բուռ մը հօ-
ղով եղբայր, մարդուն տունն էլ իս տես-
նում էք, կատարեալ տուն կը նմանի, էլ
ի՞նչ են ուղու՞մ . (ներս մտնում են Մարթա,
Ստեփան եւ Սիրանոյշ) :

Մար.—Պ. Արմենակ խնդրեմ ծանօթացէք

Ստեփ.—Ստեփան Գառնակերեան,

Արմ.—Արմենակ Արմենակեան:

Ստեփ.—Շատ ուրախ եմ, որ բարեհաճեք
էք մեզի գալու, խնդրեմ նստեցէք:

Արմ.—(անհարկաւ) շնորհակալ եմ, Ստեփան
աղա ինձ ուղարկեց ձեզ մօտ վար . . .

Ստեփ. (խօսքը կտրելով) Գիտեմ, գիտեմ
գեղ ինձի մօտ ով է ուղարկել, եւ ինչ դուր
ծով, այդ ալ գիտեմ, խնդրեմ դուք նստե-
ցէք այդ մասին մի քիչ յետոյ կը խօսինք
(Արմենակը նստում է) Սիրանոյշս քեզ տես-
եմ ահա օրվայ իմ խմած գինիէն 2 շիշ
լեր հետն ալ ը . . . , դու արդէն գիտես
զարուքեղէն (Սիրանոյշը գնում է):

Ստեփ.—Այո, Պ. Արմենակ, կեանքի փո-
ճառութիւնը մարդուն ճիշդ կեփէ կը կար-
մըրցնէ ինչպէս լաւ հաւու մը խորոված
այսինքն կուզեմ ըսել, այն գինին, որը հի-
մայ Սիրանոյշս գնաց պիտի լերէ ձեզ հիւ-
րասիրելու, այդ մեր վերի այգիի խաղողէն
է, իմ վարի այգիի գինին ես շատ չեմ սի-
րեր, կինս շատ կը սիրէ, որովհետեւ քիչ մը
քաղցր է, Սիրանոյշս ոչ ինձի կը համակրի
ոչ ալ մօրը, այսինքն Պ. Արմենակ, Սիրա-
նոյշս երբ գիմնաղիւնի վեցերորդ քրտնէր
ճիշդ այն տարին երկու ձի առի, լայց վեր-
ջը շատ գղջացի:

Արմ.—Ստեփան աղա ես եկած եմ գործով
ձեզ մօտ, ուզում էի յայտնել որ ինձ ու-
ղարկեց ձեզ մօտ վար . . .

Ստեփ.—Պ. Արմենակ խնդրեմ չի աճապա-
րէք, ես արդէն գիտեմ ձեր նպատակը եւ իմ
մօտը գալու պատճառը, այդ կը խօսինք մի
քիչ յետոյ, այսինքն կուզէի ըսել, որ ձիե-
րը երբ գնեցի առտու երեկոյ Սիրանոյշիս
գիմնաղիս կը տանէին կը բերէին. վերջա-
պէս անցաւ մի քանի շաբաթ, մեր այգե-

պանները սկսան խաղողները հաւաքել, կէս
մասը ծախեցինք, միւս մնացածն ալ գինի
շինեցինք, Սիրանոյշս հիմայ կը բերէ կը
տեսնես համը ու հօտը ճիշդ Հայաստանի
գինիներու կը նմանի:

Արմ.—Ստեփան աղա ես արդէն ուշացայ
ճշմարիտ կարող է իմ վրայ բարկանալ վար . . .

Ստեփ.—Անուշիկս, դու ամէն օր մեր տու-
նը չես եկած, փառք Աստուծոյ այսօր ա-
ռաջին անգամն է, սպասեցէք մէյմէկ գինի
խմենք վերջը կերթաւ, այսինքն կուզեք
ըսել անցեալ շաբաթ ինձի մօտ եկած էր
Պօեհաճեանը իրեն գործերը խախուռ դրու-
թիւնից ազատելու համար 8000 բուպլի փող
պարտքով կուզէր, մտածեցի մտածեցի, երբ
Սիրանոյշիս հարցուցի նա ըսաւ որ, հայրիկ
պէտք չէ տալ որովհետեւ ժամանակներն
շատ վատ են:

Արմ.—Տիկին Գառնակերեան խնդրեմ դուք
թոյլ տուէք ինձ հեռանալու, որովհետեւ ես
արդէն ուշացայ, երկար չեմ կրնար մնալ:

Ստեփ.—Այսինքն Արմենակին կուզեմ ը-
սել որ ռեպհական տունս կուզեմ ծախել մէկ
առևտրական տուն բաց բնելու, այդ մի
կողմ թողնենք (Սիրանոյշը ներս մտնում
գինի եւ ուտելիքով սեղանը պատրաստում է)
բեր տեսնենք Սիրանոյշս լեր, ես արդէն
Պ. Արմենակին պատմեցի մեր այգիներու
խաղողի եւ գինույ շնորհքը, (ընկնելով գա-
ռաք մը իրեն եւ Արմենակին) հրամայեցէք
անուշ ընենք կը տեսնես Պ. Արմենակ ի՞նչ
գինի է, եթէ վրան լաւ նայիս հայելիի
նման դէմքդ մէջը կը տեսնես, այս գինին
մարդուն ուժ ու կեանք կուտայ, այսինքն
կեանք որ կըսեն ասոր մէջն է:

Արմ.—Խնդրեմ ներեցէք ես արդէն ու-
շացայ:

Ստեփ.—Ճշմարիտ այս տարիքիս հասած եմ
քեզի նման քաղաքավարի երիտասարդ չեմ

տեսած, ի՞նչու կ'աճապարես, կարելի է ձեր ուղածին նման չենք կրնար հիւրասիրել, որ չես ուզեր մի քիչ նստիլ խօսիլ, այո պ. Արմենակ, այսինքն չի մոռնամ ըսելու, որ մեր այգիներուն մէջ շատ խնձոր կայ, այդ խնձորից կը պատրաստեն եղեր խմիչքը . . . մոռացայ ը . . . ինչպէս կրսեն (ձեռքը ձախտին դնելով) ը . . . (յանկարճ) հա եիրանոյշ, իրաւ դու կարգացիր անցեալ օրը միտքդ է ի՞նչ կրսեն .

Սիր.—Այդ Ամերիկայ կը պատրաստեն և կը կոչեն սայոր։

Ստեփ.—Այո, այո, իմ միտքս ալ եկաւ շատ ազրիս ձագուկս, այո Սիրանոյշիս ըսածին պէս սայոր կը կոչեն, այդ սայորը Պ. Արմենակին ըսեմ մարդու նոյն հաճոյքը կը պատճառէ, ինչպէս մեր վերի այգիի խաղողի գինին, խմենք պարոն այս ալ ի՞նչ կենացը (կը խմեն, այս միջոցին դուռը կը բախտեն)։

Մար.—Սիրանոյշ տես՞՞վ է դուռը կ'բախտէ

Ստեփ.—Վաղը առաւօտ ես պիտի երթամ, այգիները կը խնդրեմ, ո՞չ բարեհաճէիք ինձ հետ միասին, այսինքն երեկոյին կը վերադառնանք։

Սիր.—Երիտասարդ մըն է.

Մար.—Հարկաւոր չէ դուռը մի լանար, վերջն ալ կրնայ գալ, եթէ Ստեփան աղայի հետ գործ ունի։

Արմ.—(մեկուշի) ի՞նչ են ուզում այս մարդիկը։

Ստեփ.—Պ. Արմենակիս ըսեմ, որ մենք արդէն ծերացած ենք, բոլոր իմ ստացուածքներս Սիրանոյշիս պիտի թողնեմ, այո, չի մոռնամ այս ալ Պ. Արմենակին ըսել որ վաղը եթէ միասին այգիները գացինք այսինքն ցոյց կուտամ վերջի ժամանակ գնած կտորներս։

Մար.—Պ. Արմենակ, դու մի կարծեր, որ

Ստեփան աղան, աղայութիւն կրնէ, տնոմ պէս աշխատաւէր զժուար է գտնել, տանը համար ալ խոտովանանք բլլայ, որ լան մը չի խնայեր, Սիրանոյշս ունի տասը ձեռք զանազան զգեստներ, հապա՞ գիմնադիայի համար ծախսած փողերը։

Ստեփ.—Պ. Արմենակ, ես դեռ քեզի կը պատմեմ ուրիշ անգամ աւելի մանրամասն կերպով, այդ թողնենք մէկ կողմ, այսինքն այսինքն Պ. Արմենակին կուզէի ըսել որ մեր այգիներու խաղողը աճնաառաջինն է։

Մար.—(նկղանալով) Է՞հ ի՞նչ կը խօսիս, կ'ըսէ այգիներու դ վրայ խօսիլդ, քիչ մըն ալ թող որ մենք խօսինք Պ. Արմենակի հետ։

Ստեփ.—Պ. արմենակ, շատ կանանց մտիկ մի բներ, խմենք այս ալ բոլոր պատուական կենացը։

Արմ.—(առանձին) Սրտեք խենթացել են ինչ է՞ . . . Խնդրեմ ինձ կ'ներէք այլեւս չեմ կարող մնալ որովհետեւ . . .

Ստեփ.—Հատ լաւ Պ. Արմենակ այժմ դառնանք ձեր գործին, դու կ'աճապարես, որ ժամանակ չունիս, այսինքն դու եկած ես գործով այնպէս չէ՞։

Արմ.—Այո՛, արդէն ասացի որ ինձ ուղարկեց ձեզ մ'աւ վար . . .

Ստեփ.—Գիտեմ, գիտեմ, եթէ համաճայնէք խնդրեմ յայտնեցէք որքան կը պահանջէք, ահա չեմ ոչ ի՞նչ չկայ, որովհետեւ այստեղ օտար մարդ չկայ, բայց լաւ իմացած եղիր, որ Սիրանոյշիս ինչ որ պիտի տամ, իմ մահուանէս յետոյ հասկցա՞ր, չիտակն բսեմ հիմայ, մէկ քոս փարայ մը չունիմ, որ տամ, (այս միջոցին ներս է մտնում Սոսանը կատարած)։

ՏԵՍԻԼ Ե.

Սուս.— (խիստ քարկացած) Ա՞յս այս ի՞նչ է ձեր ըրածը դուք ի՞նչ վրայ կ'ծիծաղէք։

Թէ զիս կապիկի տեղ դրած հանաք կընէք :

Մար. — Հրամայեցէք Սուսան ապրայ հրամայեցէք :

Սուս. — Խնդրեմ՝ ըսէ՛ք, ես ձեր երեխան եմ որ զիս ձեռքերն ազ վրայ կը պտտցունէք, ահա չէ ձեզի (յարով) ինծի պէս խեղճ պառաւ կնկան մը մասխարա էք ըրէք : ո՛ւ կը ծիծ սղէք :

Մար. — Ըսէ՛, Սուսան ապրայ ինչ է եղեր ինչո՞ւ մեր սիր որ կը ստնջես, ըսէ որ մենք ալ իմանանք :

Սուս. — Ի՞նչպէս թէ ինչէ՞ եղեր, (յարով) այս տուտուտ դուք ինձի խօսք չը տւիք որ փեսացուն առ եկուք :

Մար. — Այո՛, խօսք տւինք :

Սուս. — (քարկացած) Հապա՞ ինչո՞ւ չէք ուղեր Պիղատոս աղային ընդունիլ, ես ձեր մասխարանեմ, չուտ առացէ՛ք եթե ոչ հիմայ բարձրաձայն պիտի պրուար :

Մար. — Ինչպէս թէ չենք ընդուներ, Պ. Արմենակը արդէն վաղունցէ, որ մեր Բանըստած է այնպէս չէ՞ Պ. Արմենակ :

Սուս. — Օ՞Ֆ, — օ՞Ֆ, սիրոս կը պայթի ու կը ճայթի (յարով) ես ձեզի ի՞նչ էի արել, որ զիս մասխարայ ըրիք :

Աս. — Ո՞չ, Տիկին դուք սխալուած էք, ես ուրիշ գործով եկած եմ :

Ստեփ. — (նստած տեղից վեր թռչելով) Ինչպէ՞ս ուրիշ գործով :

Արմ. — Յայտնի բան է, զիս ուղարկել է վարպետութեամբ աղան, խնդրեց որ մի քանի բուլլի պարտք ունէք վճարէք :

Ստեփ. — Հապա մինչեւ հիմայ ինչո՞ւ լուռ նստած էիք :

Արմ. — Դուք չէիք թողնում լերանա բաց անեմ, ուզում էի ձեզ յայտնել, միշտ ձայնս լռեցնում էիք, ասելով հրամայեցէք կերէք, խմեցէք եւ անուշ արէք, եւ այլն... ես ի՞նչ յանցաւոր եմ :

Ստեփ. — (քարկացած) Գնա՛, գնա՛ շուտով

հաշիւը բեր ես երբէք թող չեմ իտար, որ տունիս մէջ խոյստուակութիւն ըլլայ : (Արմենակը գնում է) կը տեսնես Սուսան, որ ի դուր տեղը զը պռաւ մենք ալ ի դուր տեղը հիւրասիրեցինք այդ յիմարին :

Սուս. — Պիղատոս տղան շատ նեղացած էր, գնաց տուն հիմայ ինձի կ'սպասէ :

Մար. — Նեղանալու իրաւունք չունէք, որովհետեւ այդ յիմարը երբեկաւ մենք կարծեցինք որ դու ուղարկած ես :

Սուս. — (հանդարտ) Փառք Աստուծոյ իմ բռնած գործերս ամենքը գիտեն. օրհնեալէ Աստուած այդ բոլոր քաղաքին յայտնի է, հիմայ ձեզի այնպէս փեսացու մը պիտի բերեմ, որ բոլոր եւրպան ման է եկեր, ամեն լեզու գիտէ Պրանգերէն, Ինկիլիզներէն եւ Գերմաներէն պիշպիշի նման կը խօսի :

Մար. — Քառ ասելովդ շատ մեծ մտրդ մըն է, այնպէս չէ՞ :

Սուս. — Օրհնեալ է Աստուած այդ գաղտնի չէ բոլոր երկիրները ման է եկել, Պրանկիստան, Չինաստան, Հնդկաստան, Ճարժնալ տեսեր է զիտէ՞ք, պտտած ու տեսած մարդ է, Աստուած վկայ Սիրանոյշին լայրիս մարդ է, ես Մարթա քրոջս ըսեր եմ, որ 200 ր. կառնեմ, Աստուած վկայ ես ուշացայ, կերթա՛մ Պիղատոս աղային հետ կուգամ, մնաք բարով (գնում է) :

Ստեփ. — Ի՞նչպէս հարսնախօսութեան համար 200 ր. խօս առցեր էք տալ Սուսանին, բայց եթէ գործը գլուխ չի բերէ, նա ո՞րքան տուգանք պիտի տայ մեզի :

Մար. — Դու աւելի լաւ կընես քիչ խօսիս :

Ստեփ. — Ես իրաւունք չունիմ ի՛մ տանս մէջ խօսելու (ճաղրելով) Մարթա տուտու կարելի է կը հրահայէ, որ բոլորովին լռեմ, այնպէս չէ՞, յախտեան լռեմ ու այգիներս քգեի մնան, հա՞ հա՞ հա՞ որպէսզի խաղողը ու գինին մինակ ուտես խմես : ր լաւ փափրաւիլիկաց ըլլաս այնպէս չէ՞ հա՞ հա՞ հա՞ պոշիվարը քալած ժամանակդ մատերով

ցոյց տան : սեւով Ստեփան աղայի կինը
մարթան, հա՞ հա՞ հա՞ և կաշտես հագուել
թէնթինէլի մէնթինէլի զգեստներ, կը քա-
լես ալ ու ձա՛ն (ոտքի եղևելով կակսի պտոյտ
անել կանացի ձեռով)

Մար.—Գինին որ խմեցիր քեզի հետ խո-
սիլ չըլլար, հաղար անգամ խնդրած ենք որ
քիչ խօսիս, մարդը դէմդ առիւր նստար կեր,
խմէ, անուշ ըրէ կարծես հիւր գալած ըլլար :

Ստեփ.—Դարձեալ ե՞ս եմ յանցաւորը, դուք
ինձ չըսիր որ փեսացուն է եկած եկուր խո-
սիր այսինքն ես ի՞նչու վրայ պիտի խօսէի
բացի այդիններուս ա՛լ ի՞նչ ունիմ :

Սիր.—Երկուսիդ ալ Աստուած շնորհք տույ,
ծերացեր է ք եւ միշտ ուրբիշներու առաջ
կը խոյտառակէք :

Ստեփ.—Ինչո՞վ ենք խայտառակ :

Սիր.—Ի՞նչպէս թէ ինչով ենք խայտառակ,
այդ պարոնի հետ այնքան մանրամասն խո-
սակցութեան բռնուեցար որ վաղը բոլոր
քաղաքը կիմանայ :

Ստեփ.—Ջաւակ, ձագուկս սխալներ միշտ
կը պատահին. ամենանշանաւոր մարդիկ շատ
անգամ իրենց գործերուն մէջ կը սխալին,
այո ի՞նչ կուզէի բսել ր. . . այսինքն բսել
կուզեմ թէ հիւրասիրելնիս պարապը գնաց :

Սիր.—Կը տեսնես ինչպէս կը խօսիս, վեր-
ջապէս ամօթ չէ քեզի համար, լսող ըլլայ
պիտի կարծէ որ պատառ մը հաց չես ուզեր
ուրիշին տալ :

Ստեփ.—Ուրիշին տալու ես ի՞նչ պարտական
եմ ես աշխատել ես չտրչարել եմ ես պէտք
է պարոնի նման վայելեմ, գու գեռ երե-
խայ ես չես գիտեր ի՞նչ ըսել է կեանքը :

Սիր.—Ես շատ եմ լսեր քու բացատրած
կեանքը, այս գինիի մէջն է , այնպէս չէ՞

Ստեփ.—(քիչ գինով ոտքի ելնամ է ուրախ)
Ապրիս աղիկս, հաղար ապրիս ձագուկս,
գինեղիւսի հաւար ծախսած փողերս իզուր
չի գնացեր եկուր ձագուկս, եկուր (իջնում է

եռեռից քեմի վրայ վագում են , քայց գինով
լիկերուն չէ կարող բռնել հետեռից համբոյր-
ներ կողարկէ) եկուր համբուրեմ քեզ ,
եկուր պաշեմ, ինչ խելացի խօսք ըսիր այո՛
կեանքը գինիի մէջ է (մօտենալով սեղանին
նորից խոնում է, այս միջոցին ներս են մտ-
նում Սոսանը եւ Պիղատոս) :

ՏԵՍԻԼ 2.

Սոս.—Խնդրեմ ծանօթացէք Պ. Պիղատոս
ը. . . ինչպէս էր ձեռ ազգան լնը մոռացայ :

Պիղ.—Պիղատոս մոխսի Մինասեան :

Ստեփ.—Ստեփան Գառնակեբեան (քորորը
կը ճանօթանան :

Սոս.—Պիղատոս էֆէնտին հինգ ամիս առաջ
Եւրպայից եկած է և ցանկութիւն յայտնեց
որ կուղէ ափսոսանալ, ես Մարթա քոյրիս
խօսած եմ անիկա գիտէ :

Մար.—Յաջողութիւն Պ. Պիղատոսին անց-
կութեան :

Ստեփ.—Այս գինին կը տեսնես, ինչպէս կը
հաւանի՞ս Պ. Պիղատոս թէ և եւրոպա պատեր
ես, լայց այսպէս գինի տեսած չունիս չէ՞ :

Պիղ.—Այո շատ հրաշալի գինի է :

Ստեփ.—Պ. Պիղատոս ըսել կուզեմ որ ամեն
բան այսինքն Սոսանը գիտէ, պէտք է գիտ-
նաս, որ այս գինիները ես իմ ձեռքովս կը
պատրաստեմ, Սիրանոյշիս կը տեսնես գիմ-
նազիան վերջացուց, ափսոս, որ տղայ չէ .
Աստուած վկայ որ լաւ քահանայ կամ վար-
դապետ կը գառնար, գիտէք որ շատ կար-
գալն ալ (գրուիւր ցոյց տալով) մարդու ու-
ղեղին քնաս կուտայ, ես որ չեմ կարգացել
ինչպէս կը հաւանիս իմ ձեռքով պատրաս-
տած գինիս, խմենք այս գինին մարդու ուժ
կուտայ, կեանք կայ ասոր մէջ, չես տեսներ
ինչպէս հայելիի նման կը փայլի :

Սոս.—Պիղատոս աղային ես խօսեր եմ սի-
րանոյշի մասին, աստուած վկայ երկուսն ալ

լայրիս մէկ մէկու խարձ բան են, այս երեկոյին պէտք է գործը վերջացնել ։

Մար.—Այդպէս շուտ կուզէ Պիղատոս աղան.

Սուս.—Է՛ր ի՞նչ կայ, փառք Աստուծոյ իրար տեսան յետաձգելու ինչ արգելք կայ օրհնեալ է Աստուած երկուքն ալ ներկայ են, ի՞նչու կը լռես Պիղատոս աղա ։

Պիղ.—Լռութիւնս արդէն նշան է համաձայութեան, ես զիս շատ բաղդաւոր կը համարեմ երբ Ստեփան աղան կը բարեհաճի զիս իրեն փեսացու ընտրել ։

Մար.—Ներկայիս մենք չենք կրնար փող տալ իսկ վերջը ր լոր ունեցածնիս աղջկանս է, Աստուած ալ գիտէ մարդն ալ գիտէ որ մենք ուրիշ զաւակ չունինք ։

Պիղ.—Ես փող չեմ պահանջեր, ես միմիայն կը ցանկանամ իմ կեանքի ընկեր ունենալ, արդէն Սուսան քոյրիկը գիտէ իմ նպատակս, որ կուղեմ գործ մը բաց անելու ի հարկէ իմ կողմից աւելորդ կըլլայ ըսելու, որ այդ գործի շարունակութեան համար պէտք է ձեր աջակցութիւնը ։

Ստեփ.—Պ. Պիղատոս ես արդէն մատչիր եմ առևտրական տուն մը բաց ընել, դուք կարող էք ինձի օգնական լաւ օգնական ըլլալ ք... ինչ կուզէի ըսել ք, . այո, ճիշդ մեր խմած գինիէն կը խմէ մեր քաղաքապետը, կը հասկնաս ի՞նչ ըսել է վաղաքապետը ։

Պիղ.—Այո ճշմարիտը ասած հազուադիւս է, ամբողջ եւրոպան պտտեցայ ոչ մի տեղ չտեսայ ։

Սուս.—Այո չ'մոռնամ ըսելու Պիղատոս է. ֆէնտին կուզէ առաջ գործ մը բաց անել ե վերջը ամուսնանալ, շիտակն ըսելով ձեզի համար ալ անպատուութիւն է, ի՞նչու քաղաքին մէջ պիտի խօսին որ, Ստեփան աղային փեսան անգործ մարդուն մէկն է ։

Մար.—Յայտնի բանէ, որ գործ մը պէտք է ունենայ ։

Սուս.—Պիղա . . . աղան պանդուխտ է խեղճը ոչ մէկը չունի, կարելի է՞ . . . անգործ ե պարապ մարդուն սիրտը միշտ կը նեղուի ։

Ստեփ.—[մտերմաբար] Ա՛խ անուշիկս ինչ կըսես սիրտդ կը նեղուի, հապա ի՞նչու չես գար միասին երթանք մեր այգիները պըտըտելու, այսինքն հոն կեանք կայ, այս գինին կը տեսնես, ի զուր տեղը մեր Յիսուս Բրիստոսը չէ օրհնել, մարդու ուժ կուտայ այս օրհնեալ ջուրը, այսինքն անցեալ օր կանչեր էր մեր վարդապետը, ես չի գացի, լաւ եմ ըրեր այնպէս չէ՞, այսինքն ես գիտէի անոր փոր ցաւը քանի մը շիշ ուղարկեցի, լաւ ըրեր եմ Պ. Պիղատոս ։

Սուս.—Ստեփան աղա խօք մ'ըն ալ դուն ըսէ, փառք Աստուծոյ գիտես ի՞նչու համար եկած ենք, Աստուած վկայ շատ միւնասիպ է Սիրանոյշիդ բաղդը ոտքիդ տակ մի առներ ։

Ստեփ.—Երբ երթանք մեր այգին այնտեղ մեծ խնձորի ծառ մը կայ, որուն համար կըսեն թէ շատ հին ժամանակէ մնացած է լայց ինչ համ ու հոտ ունի, կարծես գրախտի հոտ կը լուրէ, [այս միջոցին ներս կը մտնէ Արմենակը] ։

ՏԵՍԻԼ Է.

Արմ.—Ստեփան աղա ահա ձեր հաշիւը, Թովմաս աղան բարեւ ըրաւ ըսաւ որ եթէ փողի պէտք չունենայի մի քանի ամիս նորից կ'սպասէի [միջոց] Օ՛ Պիղատոս դու հոս ի՞նչ կ'անես, աղար երկու օր է բոլոր քաղաքը ման եմ եկել քեզ չեմ գտել, մեր խանութի հասցէով նամակ ունիս, ընտանիքդ կը խնդրէ, որ փող ուղարկես, տղադ Մինասին դպրոցէն դուրս են ուղում ձգել աղբար ամօթ չէ՞, դուն ալ խիղճ ու պատիւ ունիս, ընտանիքդ երեսի ձգած քաղքէ քաղաք ման կուգաս ։

Մար.—Ա՛խ ի՞նչ կ'ասես այս մարդը ամուսնացած է [քոյրը զարմացած] ։

Արմ.—Ամուսնացած է, երկու հաս ալ դա-

ւակներ ունի, որոնք մեզի նամակներ են
գրում օգնութեան համար [շոշափուն]։

Ստեփ.—[յանկարծ] Ըսէ՛ խնդրեմ՝ դու մեր
վրայ կը ծիծաղես, ի՞նչ ես քու մասխարան
եմ, ի՞նչ մենք քու խաղալիքներդ ենք, ըսէ՛
չուտով պատասխանէ ա՛յ քեզի մտկարա օ-
յինպազ, վհուկ, ձեռքէս ու՞ր կ'ազատես։

Արմ.—Ի՞նչ Պիղատոս չես ամաչում տխր
հերիք չէ արած խայտառակութիւններդ։

Պիղ.—Եղբայր ես ոչ մի յանցանք ունիմ
այս պառաւը երկու առտու կուգար մօտս կեր-
թար, խօսելէն դայրես տարաւ [Սուրանդոտ-
քի եղևերով ուզոնմ է գնալ]։

Մար.—[ձեռքէն քարչ տարով] Սպասի՛ր ո՞ւր
կ'երթաս այ դու պառաւ, չար հոգիներու
դուրս խարդախութեան, խարէութիւն ա-
րածող հրէ՛շ, քեզ պէտք է պատժել, որ ուրիշ
անգամ այդպիսի օյին չի լերես մեր գլխո՛ւն։

Ստեփ.—Խայտառակութիւնը մէկ կողմէն
խօսի միւս կողմէն ի զուր հիւրասիրութեան
համար կ'ափտասամ [քարկացած] ա՛խ դու պա-
ռաւ, կապիկ, շատուկ սպասիր ես հիմայ քե-
զի ցոյց կուտամ [չորսպով գնում է]։

Արմ.—Գնանք բոլորս, Ստեփան աղան գի-
նով է մեր բոլորիս գլուխը կը ջարդէ, գնանք
թէ ոչ մեր գլխին մի օյին կը սարքէ [քոյրը
վախեցած գնում են, Ստեփանը ներս եմունում
մի հաստ փայտ ձեռքին]։

Ստեփ.—[խեղճի նման պոտերով աչ ու ձախ]
Սպասիր ես ցոյց կու տամ քեզի ի՞նչ ըսել է
մարդու խաբել, ա՛խ դու ըստարանայ վեռմա
ու՞ր կազատիս ձեռքէս, այո, այժմ՝ ճան-
կիս մէջն ես, ու՞ր կարող ես փախչել, [ուշքի
գալով] ու՞ր են մարդ չիկայ, փախան, ու՞ր
գացին, [յանկարծ] հա՞ փախեր են, սպասե-
ցէք ես հիմայ կերթամ բոլորը կը բերեմ,
ես այդ սրարանայ վեռմային կը սորվեցնեմ,
որ ուրիշ անգամ ի զուր հիւրասիրութեան
պատճառ չը լինի։ [գնում է]։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՎՈՐ ԱԶԱՊԱՐԻ

1. — «ՄԱՐԿԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ», նրա ծննդա-
շարժ դառնալ, մէկ արարում .

Հեղինակութիւն Կ. Աւետիսեանի . . . 20 Կողէկ.

2. — «ԶՈՒՐ ՀԻՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ», կատակեր-
գութիւն մէկ արար, նոյն Հեղինակի . . . 25 Կողէկ.

Շուտով լոյս կ'տեսնեն «ՎԱՐԶՈՒ ՍԵՆԵԱԿ»
եւ «ՈՒՍՍԱ ՍԱՐԴԻԱ», անուն կատակերգու-
թիւնները, նոյն հեղինակի ցանկազօղք կարող
են դիմել .

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Յ. ԱԶԱՊԱՐԻ

ՎԱՌՆԱ

(Պուլկարիա)

Նոյնպէս դիմել հեղինակին

M-r G. Avedis — Goulevaia № 3.

(Russie)

Odessa



6414

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0652287

